

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՍՈՒՆԻ

**ՀՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԻԶՆԵՍԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԱԸ**

Հ.00.08-<<Մաթեմատիկական տնտեսագիտություն>>
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի զիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Աստենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական դեկավար՝
պղոփեսոր

տեխնիկական գիտությունների դոկտոր,

Արամ Համայակի Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Սարգիս Լևոնի Ղանթարջյան

տնտեսագիտության թեկնածու
Տիգրան Մերգելի Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան


Աստենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 20-ին, ժամը՝ 13.30-ին: Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մաստագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մելմագիրն առաքված է 19.05.2014թ.

015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝  Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ատենախոսությունը անդրադարձ է կատարում բիզնեսի գնահատման հիմնախնդիրներին հիմնվելով ՀՀ ծառայությունների ոլորտում գործող կազմակերպությունների արձանագրած արդյունքների վրա: Կատարված ուսումնասիրությունները և հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում բիզնեսի գնահատումը կատարվում է ոչ գիտական հիմքերի վրա, ինչը շահառուներին վստահություն չի ներշնչում՝ դանդաղեցնելով բիզնեսում որոշումների կայացման գործընթացը:

ՀՀ տնտեսության գործարար աշխարհի ներկայիս փուլը ենթադրում է միկրոտնտեսական նոր գիտելիքների կիրառություն, ինչը թույլ կտա ներգրավել էժան, երկարաժամկետ և մեծածավալ միջոցներ, ավելացնել արտադրական հզորությունները, փոխարինել ներմուծվող ապրանքները ազգային արտադրությամբ և ձեռք բերել արտահանման որոշակի պոտենցիալ:

Բիզնեսի գնահատման անհրաժեշտությունը դեռ խիստ զգացվելու է ՀՀ արժեթղթերի շուկայի զարգացման փուլում, արտաքին շուկաներում փայամանակցության ժամանակ, պետական գույքի օտարման կամ արդեն վաճառված օբյեկտների ետ գնման ժամանակ, բիզնեսների առանձնացման, բաժանման, միացման և միաձուլման գործընթացներում: Փորձի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ թույլ կտա արագ անցնել զարգացման նախնական փուլերը և խուսափել վերահաս վտանգներից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության առաջնային նպատակն է ՀՀ-ում բիզնեսի գնահատման մեջ ներառել տնտեսագիտամաթմատիկան մոտեցումներ, ինչը կրաքրացնի տրված գնահատականների նկատմամբ գործարար միջավայրի վստահությունը: Այս նպատակից ենելով՝ ձևավորվում են հետազոտության խնդիրները.

- բացահայտել՝ բիզնեսի գնահատաման ինչ մոտեցումներ է կարելի կիրառել ՀՀ-ում,
- ընտրված մոտեցումների համար ապահովել համապատասխան գործակիցներ,
- մշակել ռիսկագերծ տոկոսադրույքի գնահատման և կանխատեսման մոդելներ,
- մշակել և առաջարկել կազմակերպության հասույթի կամ գուտ կանխիկ հոսքի գնահատման և երկարաժամկետ կանխատեսման մոտեցումներ,
- մշակել և առաջարկել բիզնեսի արժեքի մաքսիմալացման մեթոդ հիմնված միջնորդության ռեսուրսի վրա:

Երկարաժամկետ հատվածում ատենախոսությունը հետապնդում է բիզնեսի արժեքի գնահատման օգնությամբ ներդնել կորպորատիվ տիրապետման և կառավարման մշակույթին ու հմտությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը բիզնեսն է, իր գործունեությամբ և բնութագրող ցուցանիշների ամբողջ համակարգով:

Հետազոտության առարկան բիզնեսի գնահատման մեթոդաբանությունն է և մոդելները:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունը հիմնված է բիզնեսի գնահատման գիտական մոտեցումների վրա, որոնք իրենց զարգացման պատմանական ընթացքում բաժանվել են երեք հիմնական ուղղությունների՝ դիսկրինտավորված գուտ կանխիկ հոսքերի, տնտեսական արժեքի ավելացման և էմպիրիկ դիտարկումների: Հիմք է ընդունվել բիզնեսի նպատակադրման նորդասական տնտեսագիտական դպրոցի նորագոյն մոտեցումները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ազգային և օտարերկրյա հեղինանակների աշխատություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր և վերլուծություններ:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման, օպտիմալացման, ֆինանսական վերլուծության, հավանականային ու վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ բանկերի, <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> ՎԿ ՓԲԸ-ի տվյալները, <<ԹԹՈՒ-ԶՈՒՐ>> ՍՊԸ-ի տվյալները, տեղական, արտերկրյա պաշտոնական վիճակագրական տվյալները և ուսումնամիջության բնագավառին վերաբերող այլ նյութեր:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

- ՀՀ տնտեսության համար ռիսկագերծ տոկոսադրույթի գնահատման և կանխատեսման նպատակով ուսումնասիրվել է ՀՀ պետական պարտատոմսերի շուկան, առանձնացվել են այդ նպատակով կիրառելի պարտատոմսերը, առաջարկվել է պարտատոմսերի ժամկետայնության և ծավալի վրա հիմնված մոդել, որի օգնությամբ գնահատվում և կանխատեսվում է պարտատոմսերի եկամտաբերությունները:
- Կազմակերպության կանխիկ հոսքերի գնահատման նպատակով առաջարկվել է կորպային գնահատման եղանակը: Իսկ երկարաժամկետ կանխատեսման նպատակով առաջարկվել է սցենարային եղանակ՝ հիմնված գնահատման արդյունքների վրա:
- Բիզնեսի արժեքի մաքսիմալացման խնդրում ավելացվել է միջնորդության ռեսուրսը, և ստացվել է այդ ռեսուրսի օպտիմալության պայմանը, իմիտացիոն մոդելավորման օգնությամբ ապացուցվել է այդ արդյունքի կիրառելիությունը:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները օգտակար կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ տնտեսության զարգացման նույն մակարդակում գտնվող երկրներում գործող բիզնեսների համար:

Հետազոտության արդյունքները նշանակություն կարող են ունենալ ուսումնական գործընթացների կազմակերպման, ինչպես նաև կազմակերպությունների կառավարման մեջ գիտական մոտեցումների կիրառման ժամանակ:

Հետազոտության արդյունքները կիրառվել են <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> ՎԿ ՓԲԸ-ի, <<ԹԹՈՒ-ԶՈՒԻՐ>> ՍՊԸ-ի և ՀՀ տնտեսության ցուցանիշների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումները և հրապարակումները: Ատենախոսության արդյունքները փորձարկվել են ՀՀ պետական պարտատոմսերի և ՀՀ-ում գործող կազմակերպությունների տվյալների օգնությամբ: Հետազոտության արդյունքները ներկայացվել են ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովում (փետրվար 2013), Հայաստանի տնտեսագետների ասոցիացիայի ամենամյա գիտաժողովում (նոյեմբեր 2013): Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են հինգ գիտական հոդվածներում [1-5]:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացության բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը բաղկացած է 138 տպագիր էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԾԱՌԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության <<Ներածություն>> բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևավորվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օրիենտն ու առարկան, ներկայացվել է ատենախոսության տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, արդյունքների գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ <<Քիզնեսի զնահատման զարգացումը և մեթոդները>> գլխում ուսումնասիրվել է բիզնեսի զնահատման գիտական մոտեցումների զարգացումը և կիրառության ոլորտները: Կատարվել են համեմատություններ ՀՀ տնտեսության և զարգացած երկրների տնտեսությունների հետ: Բացահատվել են բիզնեսի զնահատման այն մոտեցումները, որոնք կիրառելի են ՀՀ -ում գործող կազմակերպությունների համար:

1.1. Ենթագլխում ուսումնասիրվում է տնտեսական երևույթների արժեքների զնահատման պատմական ընթացքը: Բարիքների արժեքի ուսումնասիրությունն ունի որոշակի պատմություն, այն նկատվում է բալոր տնտեսական խնդիրներով գրաղվող մտածողների մոտ, որոնք փորձում են համապարփակ պատասխան տալ բարիքի արժեքի հիմքերի վերաբերյալ: Տրամարանական է, որ այդ ժամանակաշրջանում տնտեսական գործունեության արժեքի մասին խոսք չէր գնում, քանի որ փոխանակության առարկա էին հանդիսանում ոչ թե տնտեսական գործունեությունները(այսօրվա տերմինով՝ բիզնեսը), այլ այդ գործունեությունների արդյունքում ստեղված բարիքները

1.2. Ենթագլխում ուսումնասիրվում է Մայրոն Զ. Գորդոնի <<Աճի մողելը>>, որը հանդիսացավ բիզնեսի զանահատման ոլորտում հիմնական մոտեցումը: Սոդելի զարգացումը կարելի է արտահայտել (1) բանաձևի տեսքով.

$$P_0 = \int_0^{\infty} (1-b) Y_t e^{-kt} dt = \int_0^{\infty} (1-b) Y_t e^{b r t} e^{-kt} dt, \quad (1)$$

որտեղ P_0 -ն արտահայտում է զնահատվող արժեթղթի կամ բիզնեսի գինը,

k – ն արժեթղթի եկամտաբերության դրույքն է,

Y_t – ն՝ t -րդ տարում սպասվող եկամուտը,

b – ն՝ եկամտի վերաներդրման սպասվող մասնաբաժինը,

r – ը՝ ներդրումից սպասված եկամտաբերության դրույք:

t -ով՝ ժամանակի գործոնը:

1.3. Ենթագլխում դիտարկվում են դիվլիդենտների դիսկոնտավորման բազմամակարդակյա մողելները: Եթե ներդրողը ձեռք է բերում արժեթուղթ, նա ակնկալում է երկու տեսակի կանխիկ ներհոսք՝ դիվլիդենտներ բաժնետոմսի տիրապետման ժամանակ և սպասվող գին բաժնետոմսի տիրապետման ավարտին: Քանի որ ինքնին բաժնետոմսի արժեքը որոշվում է ապագա դիվլիդենտներով, ապա այն հաշվելու համար պետք է դիվլիդենտները բերել ներկա արժեքի և գումարել.

$$\text{VPSS} = \sum_{t=1}^{t=\infty} \frac{E(DPS_t)}{(1+k_e)^t}, \quad (2)$$

որտեղ VPSS (Value per share of stock) –ը մեկ բաժնետոմսի արժեքն է,

DPS_t (Expected dividends per share)- ը՝ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող սպասված դիվլիդենտը,

k_e (Cost of Equity)-ն՝ կապիտալի արժեքը¹:

Այս մողելի կիրառությունը տրամարանական է այնքանով, որ ցանկացած ակտիվի արժեք հավասարվում է դրանից ակնկալվող կանխիկ ներհոսքերի բերված արժեքին:

¹ Խոսք գնում է ներդրված միջոցների այլնտրանքային արժեքի մասին: Օրինակ բաժնետոմսերում ներդրողի համար այլնտրանքային արժեք կարող է համարվել այլ ներդրումը, եթե այն ունի միևնույն ժամանակակից առաջնային առանձինություն: Այս նաև անզերեն անվանում են <<required rate of return for equity investors>>, որը թարգմանաբար կարող է լինել՝ ներդրմից պահանջված դրույքը:

Երկմակարդակ աճի մողելը թույլ է տալիս աճի երկու մակարդակ՝ առաջին փուլ, որտեղ աճի տեմպը կայուն չէ, երկրորդ փուլ՝ աճը կայուն է և սպասվում է նման վիճակ երկար ժամանակ: Ինչպես հիմնական դեպքերում, առաջին փուլում դրսորվում է աճի ավելի բարձր մակարդակ: Երկրորդ փուլը աշխի է ընկնում աճի կայուն մակարդակով: Սոդելը կարող է օգտագործվել նաև աճի ցածր կամ բացասական մակարդակների դեպքում:

Հատուկ աճի տեմպը² տևում է ո տարի, իսկ հետագայում նկատվում է կայուն աճի տեմպ անընդհատ: Սոդելի հիմնական նշանակումներն են.

g (Extraordinary growth rate) –ով՝ հատուկ աճի տեմպը,

g_n (Stable growth rate) –ով՝ կայուն աճի տեմպը,

P_0 (Value of Stock) –ով՝ բաժնետոմսի արժեքը:

Դիվիդենտների երկմակարդակյա դիսկոնտավորման մոդելով բաժնետոմսի արժեքը կլինի.

$$VS = PVDE + PVT \quad (3)$$

որտեղ VS (Value of Stock) արտահայտությունը ներկայացնում է արժեթղթի արժեքը,

$PVDE$ արտահայտություն՝ հատուկ աճի տեմպի փուլում դիվիդենտների բերված արժեքը,

PVT ³ արտահայտություն՝ կայուն աճի ժամանակաշրջանի դիվիդենտների բերված արժեք:

Վերը նշված բանաձևում տեղադրենք համապատասխան գործոնները.

$$P_0 = \sum_{t=1}^{t=n} \frac{DPS_t}{(1+k_{e,hg})^t} + \frac{DPS_{n+1}}{(k_{e,st}-g_n)*(1+k_{e,hg})}, \quad (4)$$

որտեղ DPS_t – ով ներկայացվում է t – րդ տարում սպասվող դիվիդենտները,

$k_{e,hg}$ – ով՝ կապիտալի արժեքը բարձր աճի դեպքում,

$k_{e,st}$ – ով՝ կապիտալի արժեքը կայուն աճի դեպքում:

1.4. Ենթազիտում ուսումնասիրվում է կազմակերպության գուտ կանխիկ հոսքի հաշվարկման մեթոդանությունը: Ուսումնասիրությունը սկսվում է էֆֆեկտիվ ու սահմանային հարկերի տարբերության բացահայտմամբ, քանի որ դրանք հանդիսանում են գործառնական գործունեությունից արտահոսքեր: Որպեսզի բացահայտենք, թե որքան է կազմակերպությունը վերաներկնելու, պետք է ներդրումները բաժանել շոշափելի կամ երկարաժամկետ ակտիվների և կարձաժամկետ ակտիվների միջև:

1.5. Ենթազիտում անդրադարձ է կատարվում բիզնեսի գնահատման մեջ ոսկիզերծ տոկոսադրույթի և ոխսկի պրեմիայի հաշվարկման մեթոդանությանը: Ոխսկից գուրկ տոկոսադրույթ ապահովող ակտիվին տրվում

² Սոդելում ենթադրվում է, որ կազմակերպությունը բարձր աճ ապահովելու նախադրյալներ ունի մինչև ո-րդ տարին:

³ Կայուն աճի փուլում բիզնեսի արժեքը: Այդպես են անվանում, քանի որ բարգմանաբար նշանակում է վերջին, վերջնական արժեք:

Են որոշակի չափանիշներ: Առաջին չափանիշն այն է, որ այսպիսի ակտիվների համար մենք որոշակիորեն գիտենք եկամտաբերությունը փաստացի և սպասված եկամուաբերությունը համընկնում են: Վերոնշյալ տեղի կունենա, եթե ակտիվը չընենա արժեզրկման ռիսկ: Այսպիսի կանոնը դուրս է գրում բոլոր մասնավոր ձեռնարկությունների ակտիվները, քանի որ անզամ խոշորագույն և ապահովված կազմակերպությունները ունեն արժեզրկման ռիսկ: Միակ ակտիվները, որ կարող են բավարարել այս պայմաննին, պետական արժեթղթերն են, որովհետև անկախ նրանից, որ պետությունը ևս ունի արժեզրկման ռիսկ, այնուամենայնիվ նրա ձեռքում է փողի տպման բացառիկ մենաշնորհը, ինչն անվանական իմաստով իր թողարկած արժեթղթերը դարձնում է առանց արժեզրկման ռիսկի: Անզամ այս հանզամանքներում, երբեմն պետությունները ևս հրաժարվում են վճարել իրենց պարտավորությունները՝ կախված ուժիմների փոփոխությունից և սոցիալ-տնտեսական գործընթացներից: Գոյություն ունի երկրորդ կանոնը ոչ ռիսկային ակտիվների համար. արժեթուղթը չպետք է ունենա վերաներդրման ռիսկ:

1.6. Ենթազինում ներկայացվում են բիզնեսի գնահատմանը առնչվող այլ մոդելներ: Վիլիամ Շարպի(1964) և Ջոն Լինտների(1965) <<Կապիտալ ակտիվների գնահատման մոդելը>> (CAPM): Կապիտալ ակտիվների գնահատման մոդելն արժեքավոր է իր պարզ, ուժեղ տրամարանությամբ և ռիսկի ու եկամուտների միջև հարաբերությունների կանխատեսման հնարավորությամբ:

Բիզնեսի գնահատման մեթոդների զարգացումը նշանավորվեց նաև <<Քազմարկիչի եղանակի>> օգտագործմամբ:

Առենախտության երկրորդ <<Բիզնեսի գնահատման գուտ կանխիկ հոսքների դիսկոնտավորման եղանակը>> զիստմ ուշադրությունը կենտրոնացվում է գուտ կանխիկ հոսքների դիսկոնտավորման եղանակի կիրառման համար անհրաժեշտ բաղադրիչների մարեկատիվական գնահատման և կանխատեսման վրա: Այսպիսով բիզնեսի արժեքը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$V_0 = \sum_{i=1}^n \frac{FFCF_i}{(1+r)^i}, \quad (5)$$

որտեղ V_0 մեծությունը տվյալ պահին բիզնեսի գնահատվող արժեքն է,

$FFCF_i$ (Forecasted Free Cash Flow in i - th period) – ն i-րդ

ամանալակահատվածում կանխատեսված գուտ կանխիկ հոսքն է,

r – ը դիսկոնտավորման դրույքն է,

$i = 1,2,3 \dots$:

Մյուս կողմից այդ r դիսկոնտավորման դրույքը կարելի է արտահայտել.

$$r = RFR + \beta * RP, \quad (6)$$

որտեղ RFR (Risk Free Rate) – ը ռիսկից գուրք կամ ռիսկագերծ տոկոսադրույքն է,

β – ն շուկայի հետ եկամուտների կորելացվածության գործակիցն է (բետա գործակից),

RP (Risk Premium) – ն՝ ռիսկի պրեմիան:

Սույն նախաբանում ակնհայտ է դառնում, որ այս եղանակով բիզնեսը գնահատելու համար պետք է ուսումնասիրել գնահատել և կանխատեսել ներկայացված չորս փոփոխականները՝ զրոտ կանխիկ հոսքերը (FFCF_i), ոիսկից զրոտ տոկոսադրույթը (RFR), բետուա գործակիցը (β) և ոիսկի պրեմիան (RP):

2.1. Ենթագլուում առաջարկվում է բիզնեսի գնահատման նպատակով կազմակերպության զրոտ կանխիկ հոսքերը գնահատել կորային գնահատման մեթոդով (Curve Estimation): Հետևելով Գրենմերի առաջարկած և կիրառած մեթոդաբանությանը, ունենալով ավելի հզոր ծրագրային հնարավորություններ (այս պարագայում խոսք գնում է SPSS 16.0 փաթեթի մասին) առաջարկում ենք կիրատել կորային ռեզրեսիվի գնահատման մոտեցումը: Այս իմաստով նպատակահարմար է գնահատումն իրականացնել հետևյալ ֆունկցիաների օգնությամբ:

- գծային՝

$$y = b_0 + b_1 * t,$$
 (7)
- լոգարիթմական՝

$$y = b_0 + b_1 * \ln(t),$$
 (8)
- հակադարձ՝

$$y = b_0 + b_1 / t,$$
 (9)
- քառակուսային՝

$$y = b_0 + b_1 * t + b_2 * t^2,$$
 (10)
- խորանարդ՝

$$y = b_0 + b_1 * t + b_2 * t^2 + b_3 * t^3,$$
 (11)
- աստիճանային՝

$$y = b_0 * t^{b_1} \text{ կամ } \ln(y) = \ln(b_0) + b_1 * \ln(t),$$
 (12)
- ցուցային՝

$$y = b_0 * b_1^t \text{ կամ } \ln(y) = \ln(b_0) + t * \ln(b_1),$$
 (13)
- էքսպոնենցիալ ցուցային՝

$$y = e^{b_0 + b_1 * t} \text{ կամ } \ln(y) = b_0 + b_1 * t,$$
 (14)
- էքսպոնենցիալ հակադարձ ցուցային՝

$$y = e^{b_0 + b_1 / t} \text{ կամ } \ln(y) = b_0 + b_1 / t,$$
 (15)
- ընդլայնված էքսպոնենցիալ ցուցային՝

$$y = b_0 * e^{b_1 * t} \text{ կամ } \ln(y) = \ln(b_0) + b_1 * t:$$
 (16)

2.2. Ենթագլուում առաջարկվում են լրուումներ երկրորդ գլխում բերված (6) հավասարումում, ոիսկոնտավորման դրույթի հաշվարկի համար պետք է գնահատել երեք ցուցանիշներ՝ ոչ ոիսկային տոկոսադրույթը (RFR), բետուա գործակիցը (β) և ոիսկի պրեմիան (RP): Ընդ որում ոիսկի պրեմիան (RP) իր հերթին կարելի է հաշվարկել սպասվող եկամտաբերության և ոիսկազերծ տոկոսադրույթի տարբերությամբ: Սկզբում պետական պարտասումսերի

Եկամտաբերության մոդել ստանալու նպատակով դրանք արդիում ենք երեք մասերի՝ կարճաժամկետ(մինչև մեկ տարի), միջնաժամկետ(մեկից եինզ տարի), երկարաժամկետ(եինզից քսան տարի): Յուրաքանչյուր խմբի եկամտաբերության ցուցանիշները հաշվարկելու նպատակով կիրառվում է կշռված միջինի հետևյալ բանաձևը.

$$Y = \frac{\sum_{i=1}^n (V_i * Y_i)}{\sum_{i=1}^n V_i}, \quad (17)$$

որտեղ Y -ը տարեկան կշռված տոկոսային եկամտաբերությունն է,

n -ը՝ միննույն տեսակի պարտատոմսի հերթական թողարկումները,

V_i -ն՝ i -րդ թողարկման(տեսակի) ծավալը,

Y_i -ն՝ i -րդ թողարկման(տեսակի) պարտատոմսի տոկոսային եկամտաբերությունը:

Քանի որ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը էապես կորելացված է դրանց ժամկետայնության և ծավալի հետ, ապա առաջարկվում է ներկայացնել պետական պարտատոմսերի ապագա եկամտաբերությունը ընդհանրական գծային մոդելի տեսքով:

Գնահատման արդյունքում կունենանք.

$$\overline{epp}_t^i = \widehat{\beta}_1^i + \widehat{\beta}_2^i * jpp_t^i + \widehat{\beta}_3^i * vpp_t^i, \quad (18)$$

որտեղ epp_t^i -ով ներկայացվում է i -րդ տեսակի պետական պարտատոմսի եկամտաբերությունը t -րդ ժամանակահատվածում,

jpp_t^i -ով՝ i -րդ տեսակի պետական պարտատոմսի ժամկետայնությունը t -րդ ժամանակահատվածում,

vpp_t^i -ով՝ i -րդ տեսակի պետական պարտատոմսի ծավալը t -րդ ժամանակահատվածում,

$\widehat{\beta}_1^i, \widehat{\beta}_2^i, \widehat{\beta}_3^i$ -ով՝ գնահատված գործակիցները:

Բետա գործակիցի հիմնական մոդելը տրամաբանական է, քանի որ գրեթէ միշտ բիզնեսների եկամտաբերությունները ունեն ընդհանրություններ շուկայի հետ: Քանի որ զոյթություն ունեն արժեթղթեր կամ բիզնեսներ, որոնք առավել զգայուն են շուկայի դինամիկային, քան վյունները, ապա տարբերվում են բարձր, միջին և ցածր գործակիցներով բիզնեսները: Շուկայի մոդելը կարելի է ներկայացնել 19-րդ հավասարումով.

$$R_{it} = \alpha_i + \beta_i R_{mt} + e_{it}, \quad (19)$$

որտեղ R_{it} -ն՝ i -րդ արժեթղթի եկամտաբերությունն է t -րդ ժամանակահատվածում,

R_{mt} -ն՝ շուկայի եկամտաբերությունն է(ուղենշային) t -րդ ժամանակահատվածում,

α_i -ն հաստատունն է,

β_i -ն՝ գնահատվող բետա գործակիցն է:

Սովորաբար այս գնահատականները կարող են տրվել հասարակ ուղղեսփայի օգնությամբ: Այդ դեպքում բետա գործակիցը կլինի:

$$\beta_i = \frac{\text{cov}(R_{it}; R_{mt})}{\text{var}(R_{mt})}: \quad (20)$$

Անհրաժեշտ է նշել, որ շուկայի մոդելը չի հիմնվում ներդրումային վարքի որևէ առանձնահատկության վրա, այլ ուղղակի բացահայտում է գծային կախվածությունը դիտարկվող օբյեկտի եկամտաբերության և շուկայի եկամտաբերության մեջ:

2.3. Ենթագիտում ներկայացվում է բիզնեսի արժեքի մաքսիմալացման 1963թ. Էխսների և Ստրոցի մոդելը, որում ավելացվում է միջնորդության ռեսուրսի գաղափարը և նպատակադրվում է գտնել միջնորդության ռեսուրսի այն օպիմալ գինը, որի դեպքում բիզնեսի արժեքը հասնում է իր առավելագույն արժեքին: Նշված մոդելը կլինի:

$$MAX_{[L_t, K_t, p_s^B]} E[\sum_{s=t}^{\infty} [(1+r)^{-(s-t)} [F(L_s, B_t, K_s; \tau_s) - G[I_s, K_s; \tau_s] - w_s L_s - p_s^I I_s - p_s^B B_s]], \quad (21)$$

$$K_s = I_s + (1-\delta)K_{s-1}, \quad (22)$$

$$B_s = B_s(p_s^B), \quad s=t, t+1, \dots \quad (23)$$

$$\text{Lim}_{s \rightarrow \infty} E_t[(1+r)^{-(s-t)} \{F_K[L_t, B_t, K_t; \tau_t] - G_K - p_{t+s}^I - G_t[t+s]\} K_{t+s}] = 0, \quad (24)$$

(23) արտահայտությունը ցույց է տալիս, որ միջնորդություն ռեսուրսի առաջարկը կախված է դրա համար տրամադրվող գնից: (24) արտահայտությունը օպտիմալացման խնդրի տրանսվերսալության պայմանն է, որն ապահովում է վերջավոր լուծում:

Խնդիրը լուծելու համար (22) նույնությունից (21) նպատակային ֆունկցիայում տեղադրենք $I_s = K_s - (1-\delta)K_{s-1}$.

$$MAX_{[L_t, K_t, p_s^B]} E[\sum_{s=t}^{\infty} [(1+r)^{-(s-t)} [F(L_s, B_s, K_s; \tau_s) - G[I_s[K_s - (1-\delta)K_{s-1}], K_s; \tau_s] - w_s L_s - p_s^I (K_s - (1-\delta)K_{s-1}) - p_s^B B_s]], \quad (25)$$

Խնդիրը կարելի է լուծել ըստ L_t, K_t և p_t^B փոփոխականների, քանի որ ըստ այդ փոփոխականների առաջն կարգի ածանցյալները մեծ են զրոյից, իսկ երկրորդ կարգի ածանցյալները՝ փոքր: Աշխատումի և կապիտալի համար վերոնշյալը դասական ենթադրություններ են և անհրաժեշտություն չկա մանրամասներու: Իսկ ինչ վերաբերում է միջնորդության ռեսուրսի՝ դա ևս տրամաբանական է, զինը բարձրացնելով միջնորդություն տրամադրողին ստիպում ենք մեցացնել իր միջնորդության քանակը, բայց յուրաքանչյուր հաջորդ բարձրացման զուգնը առաջնային է կարողանում ավելացնել այն:

Խնդրի լուծման համար մեզ բավական է ընդամենը երկու ժամանակների ($s=t$, $s=t+1$) գումարը, իսկ սպասման օպերատորը չի մասնակցում ածանցմանը, կարող ենք ազատվել սպասման օպերատորից և գումարի նշանից՝ թողնելով միայն այր երկու գումարելիները.

$$MAX_{[L_t, K_t, p_s^B]} [(1+r)^{-0} [F(L_t, B_t, K_t; \tau_t) - G[I_t[K_t - (1-\delta)K_{t-1}], K_t; \tau_t] - w_t L_t - p_t^I (K_t - (1-\delta)K_{t-1}) - p_t^B B_t] +$$

$$(1+r)^{-1} [F(L_{t+1}, B_{t+1}, K_{t+1}; \tau_{t+1}) - G[I_{t+1}[K_{t+1} - (1-\delta)K_t], K_{t+1}; \tau_{t+1}] - w_{t+1}L_{t+1} - p_{t+1}^B(K_{t+1} - (1-\delta)K_t) - p_{t+1}^B B_{t+1}], \quad (26)$$

Եթե (26) արտահայտությունը ածանցենք ըստ L_t -ի և հավասարացնենք զրոյի,
ապա կստանանք.

$$F_L[L_t, B_t, K_t; \tau_t] - w_t = 0, \quad (27)$$

Եթե (26) արտահայտությունը ածանցենք ըստ K_t -ի և հավասարացնենք զրոյի,
ապա կստանանք.

$$F_K[L_t, B_t, K_t; \tau_t] - G_K - G_I - p_t^I + (1+r)^{-1}[(1-\delta)G_{l_{t+1}} + (1-\delta)p_{t+1}^I] = 0,$$

$$[F_K[L_t, B_t, K_t; \tau_t] - G_K] - [G_I - \frac{(1-\delta)G_{l_{t+1}}}{(1+r)}] - [p_t^I - \frac{(1-\delta)p_{t+1}^I}{(1+r)}] = 0, \quad (28)$$

Եթե (26) արտահայտությունը ածանցենք ըստ p_t^B -ի և հավասարացնենք զրոյի՝
նկատելով, որ B_t -ն ֆունկցիա է p_t^B -ից.


$$F_{B_t}[L_t, B_t, K_t; \tau_t] * B_{t p_t^B} - B_t = 0, \quad (29)$$

$$F_{B_t}[L_t, B_t, K_t; \tau_t] = \frac{B_t}{B_t p_t^B}; \quad (30)$$


Այս պայմաններն ունեն իրենց տնտեսագիտական մեկնաբանությունը:
(27) հավասարումը աշխատուժ ռեսուրսի սահմանային արտադրողականության
ընդունված պայմանն է: (28) հավասարումը ցոյց է տալիս, որ կապիտալի
կուտակման հորիզոնում կազմակերպությունը կլինի անտարբեր տ պահին
կապիտալի մեկ միավոր աճի և $(t+1)$ պահին $(1-\delta)$ միավոր նվազմանը, քանի որ
դա թողնում է կապիտալի մեծությունն անփոփոխ (t+1) պահին, (30)
արտահայտությունը միջնորդություն ռեսուրսի գնի օպտիմալացման պայմանն է,
որը մարդկանականում է բիզնեսի արժեքը:

Առենախտության երրորդ **<<Բիզնեսի արժեքի քանակական գնահատականներ>>** գլխում հետապնդվում է ՀՀ-ում գործող կազմակերպությունների իրական գնահատականներ, որոնք կարող են դառնալ
պրակտիկ մեթոդներ հետագա գնահատումների համար: Ըստ բիզնեսի գնահատման էրիկայի, այն բոլոր ցուցանիշները, որոնք իրավարակայնորեն ներկայացված են, կարելի է օգտագործել գնահատման գործընթացում: Այդ
իմաստով մենք կդիտարկենք ծառայությունների ոլորտի ֆինանսական և
խորհրդատվական հատվածները, որը հանդիսանում է առավել թափանցիկ և
հրապարակելի ձյուլը ՀՀ տնտեսությունում: Այս աշխատանքում տրվում է
գնահատական **<<ԱԳԲԱ Լիգնաց>>** ՎՎ ՓԲԸ, **<<ԹթՌԱ-ԶՈՒՄ>>** ՍՊԸ
կազմակերպությունների հրապարակային տվյալներով:

3.1. Ենթագլխում տրվում է ՀՀ ծառայությունների ոլորտի արդյուքների ամփոփ նկարագիրը: Բիզնեսի զնահատմանն ուղղված գիտական աշխատանքում քանակական գնահատականներ տալու համար պետք է ընտրել առավել նշանակալի, թափանցիկ և զարգացումներով հարուստ ոլորտ: Այդ իմաստով ՀՀ ծառայությունների ոլորտը, ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների, հանդիսանում է առավել նպատակահարմար ոլորտ (ոլորտի ծավալների տվյաները ներկայացված գծապատկեր 1-ում): Վիճակագրությունից ակնհայտ է դասնում, որ անգամ ձգնաժամի տարիներին ծառայությունների ոլորտը անկում չի ապրում և շարունակում է աճի տրամաբանությունը: Գծապատկեր 2-ում ցույց է տրված ծառայությունների ոլորտի մասնաբինը ՀՆԱ-ում, այդ ցուցանիշը տասը տոկոսից հասնում է ՀՆԱ քարորդ մասի 2012թ.: Այսպիսով, նպատակահարմար է քանակական դիտարկումները կատարել այս ոլորտի վերաբերյալ:



Գծապատկեր 1: 2001-2012թթ. ՀՆԱ և ծառայությունների ծավալները /մլրդ դրամներով/




Գծապատկեր 2: Ծառայությունների ծավալի և ՀՆԱ հարաբերությունը

3.2. Ենթագլխում ներկայացվում է զուտ կանխիկ հոսքի զնահատման հաշվապահական եղանկը, որի դեպքում հնարավորություն չունենալով

Էկոնոմիստրիկ գնահատականներ տալու՝ դիմում ենք միջինացված ցուցանիշի մոտեցման:

3.3. Ենթագլխում տրվում է քանակական գնահատական երկրորդ գլխում առաջարկված կորային գնահատականի համար: Քանի որ բիզնեսի ապագա արձերների սպասումները եւկանորեն ազդում են դրա առօրյա գործունեության վրա, և ՀՀ-ում գործող կազմակերպությունները գոնվում են կայտնացման փուլում, ապա նպատակահարմար է այստեղ ևս օգտագործել սցենարային կանխատեսման եղանակներ: Գծապատկեր 3-ում ներկայացված է <<ԹթՈւ-ԶՈՒՄ>> ՍՊԸ-ի բիզնես խորհրդատվական ծառայության գուտ կանխիկ հոսքերի դիմամիկան 2012 թվականի դեկտեմբերից՝ հիմնադրման պահից:



Գծապատկեր 3: <<ԹթՈւ-ԶՈՒՄ>> ՍՊԸ-ի բիզնես խորհրդատվական ծառայության գուտ կանխիկ հոսքերը

Ինչպես նշված է սույն հետազոտության 2.1. ենթագլխում, գուտ կանխիկ հոսքի գնահատումը կվատարենք կորերի օգնությամբ: <<SPSS 16.0>> փաթեթի օգնությամբ կազմակերպության կանխիկ հոսքը կազմակերպության գնահատականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում կախյալ փոփոխականը գուտ կանխիկ հոսքն է (Dependent Variable:FCF), կորերը ներկայացված են համապատասխանաբար՝ գծային (Linear), լոգարիթմական (Logarithmic), հակադարձ (Inverse), քառակուսային (Quadratic), խորանարդային (Cubic), ցուցային (Compound), աստիճանային (Power), էքսպոնենցիալ ցուցային (Growth), էքսպոնենցիալ (Exponential), էքսպոնենցիալ հակադարձ (Logistic): Ուեզբեսիաների որոկական ցուցանիշները ներկայացված են. ուեզբեսիայի դետերմինացիայի գործակից (R Square), գործակիցների նշանակալիություն (Sig.), հաստատուն (Constant), գնահատվող գործակիցներ (b1, b2, b3):

Հետևելով մեր կողմից առաջադրված երկու ցուցանիշների՝ դետերմինացիայի գործակիցի և սխալների քառակուսայիների գումարի առանձնացնում ենք առավել ճշգրիտ գնահատող կորեր՝ գծային (Linear), քառակուսային (Quadratic), խորանարդային (Cubic), աստիճանային (Power):

Կախյալ փոփոխական
(Dependent Variable: FCF)

Հավասարում (Equation)	Մոդելի տեսքը (Model Summary)					Գործակիցների գնահատականները (Parameter Estimates)			
	R Square	F	df1	df2	Նշան (Sig.)	Հաստատուն (Constant)	b1	b2	b3
Գծային (Linear)	.500	247.833	1	248	.000	6.812E3	111.191		
Լոգարիթմական (Logarithmic)	.445	199.064	1	248	.000	-1.506E4	7.898E3		
Հակադարձ (Inverse)	.087	23.484	1	248	.000	2.182E4	-4.321E4		
Քառակուսային (Quadratic)	.512	129.407	2	247	.000	4.016E3	177.758	-.265	
Խորանարդ (Cubic)	.512	86.086	3	246	.000	4.688E3	145.951	.051	.000
Ցուցային (Compound)	.473	222.873	1	248	.000	6.946E3	1.007		
Աստիճանային (Power)	.538	289.150	1	248	.000	1.291E3	.566		
Էրո. ցուցային (Growth)	.473	222.873	1	248	.000	8.846	.007		
Էրապոնենցիալ (Exponential)	.473	222.873	1	248	.000	6.946E3	.007		
Էրո. հակադարձ (Logistic)	.473	222.873	1	248	.000	.000	.993		

Աղյուսակ 1: Կորային գնահատման մոդելների նկարագրությունը և գործակիցների գնահատականները

Ըստրված կորերի հավասարումները կարելի է արտահայտել հետևյալ տեսքով.


$$\text{գծային} \quad FCF_t = 6812 + 111.191 * t, \quad (31)$$

$$\text{քառակուսային} \quad FCF_t = 4016 + 177.758 * t - 0.265 * t^2, \quad (32)$$

$$\text{խորանարդային} \quad FCF_t = 4688 + 145.951 * t + 0.051 * t^2 + 0 * t^3, \quad (33)$$

$$\text{աստիճանային} \quad FCF_t = 1291 * t^{0.566}, \quad (34)$$

Գծապատկեր 4-ում ներկայացվում է (31), (32), (33), (34) կորերով կազմակերպության զուտ կանխիկ հոսքերի միջև 364-րդ ցուցանիշի կանխատեսումները:



Գծապատկեր 4: Կանխատեսած կորերի հետագծերը

Տրված գնահատականների համար պետք է կիրառել ստուգման մեթոդներ: Այդ նպատակով առաջարկվում է կիրառել Թեխիլ անհավասարության գործակիցը:

$$U = \frac{\sqrt{\frac{1}{T} \sum_{t=1}^T (Y_t^S - Y_t^A)^2}}{\sqrt{\frac{1}{T} \sum_{t=1}^T (Y_t^S)^2} + \sqrt{\frac{1}{T} \sum_{t=1}^T (Y_t^A)^2}}, \quad (35)$$

որտեղ U -ն Թեխիլ գործակիցն է,

T -ն՝ գնահատված ցուցանիշների քանակը,

Y_t^S -ը՝ գնահատված ցուցանիշները,

Y_t^A -ն՝ փաստացի ցուցանիշները:

Թեխիլ գործակիցը տատանվում է $[0;1]$ միջակայքում: Ըստ որում որքան այն մոտ է զրոյին, այնքան գնահատականները և փաստացի տվյալները իրար մոտ են, և հետևաբար գնահատված կորի կանխատեսման ուժգնությունը բարձր է: Հակառակ դեպքում՝ մեկին մոտ, գնահատված կորի կանխատեսման ուժը ցածր է:

Կանխատեսման ուժի ստուգման նպատակով հաշվենք մեր կողմից գնահատված քայլին, քառակուսային, խորանարդային և աստիճանային կորերի համար Թեխիլ գործակիցը: Գործակցի արժեքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Գնահատված կորը	Թեխիլ գործակիցը
Գծային	0.175466
Քառակուսային	0.17322855
Խորանարդային	0.173123899
Աստիճանային	0.188099

Աղյուսակ 2: Թեխիլ գործակիցը

